ՁԵ N 2

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հովհաննես Ավետիսյան՝ Լոռու մարզպետի տեղակալ
Արուս Թումանյան՝ Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**. – ՉԺՀ, Շանսի նահանգի Թայյուան քաղաք, 9-11.09.2024թ.

4. **Հրավիրող կողմը** (առկայության դեպքում). – Թայուանի Էներգետիկ և ցածր ածխածնային զարգացման ֆորումի կազմակերպչական կոմիտե

5. **Գործուղման նպատակը** – Այցի նպատակը հանդիսանում է մասնակցել «Էներգիա. նոր արտադրողական ուժ՝ հանուն մաքուր և գեղեցիկ աշխարհի» թեմայով ֆորումին:

6. **Քննարկված թեմաները** (հարցերը)- Գագաթնաժողովի բացման արարողությանը ողջույնի խոսքով հանդես եկավ Շանսի նահանգի կոմունիստական կուսակցության քարտուղար՝ Տան Դենցզին, որը հանդիսանում է նահանգային խորհրդի մշտական հանձնաժողովի նախագահը, այնուհետև կլիմային փոփոխության հարցերով Չինաստանի հատուկ ներկայացուցիչ՝ Լյու Չժենմին, Էներգետիկայի ոլորտի ազգային գլխավոր տնտեսագետը՝ Լյու Ցզյունլին, մի շարք հյուրեր և ներկայացուցիչներ տարբեր երկրներից: Էներգետիկայի նվաճումների և ցածր ածխածնային ճանապարհով էներգիայի ստացման վերաբերյալ իրենց հետազոտություններն ու արդյունքները ներկայացրեցին Չինաստանի խոշորագույն ընկերությունները, համալսարանական համապատասխան ոլորտային ներկայացուցիչները, ինչպես նաև համագործակցային երկրների ներկայացուցիչները, որոնք ունեն ընդանուր ծրագրեր Էներգաարդյունավետության ոլորտում:

7. **Հանդիպումները**- 09.09-ին փակ հանդիպում՝ կլոր սեղանի շուրջ, հրավիրված երկրներից 15-ի ներկայացուցիչների հետ, որին հաջորդում է պաշտոնական ընթրիքը մասնակից երկրների ներկայացուցիչների և հյուրընկալող երկրի պաշտոնատար անձանց հետ համատեղ: Փոխմարզպետ Ավետիսյանը հարցազրույցներ է տվել Շանսի նահանգի և Թայյուանի գլխավոր հեռուստաընկերություններին: Այնուհետև մասնակցել ենք ազգային և մշակույթային միջոցառմանը: 10.09-ին Էներգիայի և ցածր ածխածնային զարգացման ֆորումի բացման արարողությունը: Այցելություն հին Թայյուան, որը հանդիսանում է պահպանված և վերականգնված պատմամշակութային վայր: Հաջորդիվ հանդիպում հրավիրված երկրների հետ, որտեղ ելույթով հանդես եկավ Շանսի նահանգի արտաքին գործերի ղեկավար Դոնգ Շաուինը: Այնուհետև բաց քննարկումներ և հանդիպումներ տարբեր երկրների ներկայացուցիչների

հետ՝ Մոլդովա, Հունգարիա, Չիմբաբվե և այլն: Մասնավոր զրույց Շանսի նահանգի արտաքին գործերի ղեկավարի հետ, Շանսի նահանգի Յունչեն քաղաքի արտաքին գործերի ղեկավարի հետ (Յանգ Յունիինգ), խոշոր ընկերությունների ներկայացուցիչների հետ՝ քաղաքաշինության, ջրամբարաշինության, ասֆալտապատման, մեքենանարի արտադրության, ապակիների արտադրության նորագույն տեխնոլոգիաների և այլ ոլորտների:

8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**- Ամրապնդել կապերը Չինաստանի ժողովրդավարական հանրապետության հետ, և վերականգնել Չինաստանի Յունչեն քաղաքի և Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի համագործակցությունները

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**- համագործակցել հնարավոր բոլոր ոլորտներում, ամրապնդել համագործակցությունը Ստեփանավանի հետ, դիտարկել քաղաքաշինության, ասֆալտապատման և ջրամբարաշինության ոլորտներում տենդերներին մասնակցությունը :

Գործուղվող՝ Հ. Ավետիսյան
Ա. Թումանյան

17.09.2024թ.